

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի նախնական տվյալների, դրամական բազան 2001թ. հունվարի վերջի դրությամբ կազմել է 64740 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ այն նվազել է 7650 մլն. դրամով կամ 10,6%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է համապատասխանաբար՝ 16526 մլն. դրամով կամ 34,3%-ով:

2001թ. հունվարի վերջի դրությամբ դրամական զանգվածը կազմել է 143878¹ մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ նվազել՝ 7775 մլն. դրամով կամ 5,1%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է համապատասխանաբար՝ 41056 մլն. դրամով կամ 39,9%-ով: Նախորդ ամսվա նկատմամբ նշված փոփոխությունը պայմանավորված է և՛ զուտ ներքին ակտիվների, և՛ զուտ արտաքին ակտիվների նվազմամբ՝ համապատասխանաբար 4646 մլն. դրամով և 3129 մլն. դրամով:

2001թ. հունվար ամսում դրամական զանգվածի կառուցվածքում աճ է գրանցվել ցպահանջ դեպոզիտների և ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների գծով՝ համապատասխանաբար 11,1%-ով (1325 մլն. դրամով) և 2,8%-ով (2257 մլն. դրամով), իսկ բանկային համակարգից դուրս կանխիկ դրամը նվազել է 19,1%-ով (11357 մլն. դրամով): Ընդ որում ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 2001թ. հունվարի վերջի դրությամբ կազմել է 57,3% և տարեսկզբի համեմատ աճել է 4,4 տոկոսային կետով:

Դրամական զանգվածն ըստ բաղադրատարրերի

(ամսվա վերջի դրությամբ, մլն. դրամ)

	2000թ. դեկտեմբեր	2001թ. հունվար
Դրամական զանգված, ընդամենը	151653	143878
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	104,4	94,9
տոկոսով ընդամենը	100	100
այդ թվում՝		
Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ	59485	48128
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	116,8	80,9
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	39,2	33,5
Ցպահանջ դեպոզիտներ	11909	13234
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	83,0	111,1
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	7,9	9,2
Ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտներ	80259	82516
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	100,4	102,8
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	52,9	57,3

ՀՀ ազգային արժույթով դրամական զանգվածը 2001թ. հունվարի վերջին կազմել է 67282 մլն. դրամ (ներառյալ հաշվարկված տոկոսները), իսկ բանկերի կողմից ներգրավված արտարժույթով դեպոզիտները՝ 76596 մլն. դրամ: Ընդ որում, արտարժույթով դեպոզիտները 2000թ. դեկտեմբերի վերջի համեմատ աճել են 1822 մլն. դրամով կամ 2,4%-ով և կազմել են դրամական զանգվածի 53,2%-ը: Արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 2000թ. դեկտեմբերի վերջի համեմատ աճել է 3,9 տոկոսային կետով:

¹ Ընդգրկում է հաշվարկված տոկոսները:

Դրամական զանգվածի կառուցվածքը

(%-ով ընդամենի նկատմամբ)

	2000թ. դեկտեմբեր	2001թ. հունվար
Դրամական զանգված	100	100
այդ թվում՝		
ազգային արժույթով	50,7	46,8
արտարժույթով	49,3	53,2

Դրամական զանգվածի և բազայի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում դրամական բազմարկիչը հունվարին հավասարվել է 2,1-ի:

ՀՀ կենտրոնական բանկի ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը 2001թ. հունվարին ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվել է 25%:

ՀՀ բանկային համակարգի կողմից ներքին տնտեսության նկատմամբ պահանջները (դրամով և արտարժույթով) 2001թ.փետրվարի 1-ի դրությամբ կազմել են 109455¹ մլն. դրամ և 2001 թ հունվարի 1-ի համեմատ աճել են 136 մլն. դրամով կամ 0,1%-ով:

¹ Ընդգրկված են հաշվարկված տոկոսները: